Աստի մինչեւ ական տեղին
Նոր նորոգեաց արդեամբ անձին.
Տեղեաւ էր սա Երեւանցի
Բնիկ միաբան էջմիածնի:
Ի 1827 ամի:

Հրատ. «Ազգ. հանդ.», VII-VIII, 412:

Ծանոթ. Լալայանը հաղորդում է, որ Անտոն արքեպիսկոպոսը Հաղբատ է եկել Եփրեմ կաթողիկոսի հետ՝ տարագրության մեջ չլքելով հովվապետին: Ստացվում է, որ այդ ուղևորությունը երկար է տևել, և կաթողիկոսը Ծործորեցու գերեզմանին, իսկ ուղեկցորդը չորս տարի անց՝ ջրակունքում ջրահավաք ավազան է կառուցել:

Ծ Ա Ղ Կ Ա Շ Ա Տ

Փոքրիկ գյուղ է Հաղբատից հարավ-արևմուտք, Կիստոմ գետակի աջակողմյան վտակներից մեկի աջ ափին:

525. ԹԵՎԱՎՈՐ ԽԱՉՔԱՐ. հենած գյուղամիջյան եկեղեցու պատին, թիկունքին.

ԿԱՆԳՆԵՑ /ԱՐ/ ՀԱԿ/ ՄԵ ԱԼՎԱ /ՐՊԱՅ ԵՒ ԻՄ
ԱՄԲԻՆԵ ԱՒԱԳ ԵՂԲԱՐ ՄԵՐ ԴԱՒԹԻ:
ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ՝ ՅԻՇԵՑԵՔ Ի ՏՐ:
ՀՊՎԱ

526. ԽԱՉՔԱՐ. գյուղից 1,5 կմ արևմուտք, նորաշեն մատուռի մեջ, քիվին, ճակատին և խաչքների միջև 5 տող.

ՍԲ ԽԱՉՍ Բ[Ա]Ր[Ե]Խ[Ա]
ԻՍ Է ..ԳԻՐ ՎԱՐԴԻ
Ն ....ՆԱՄ:
ՔՍ ԱՇ:
ԹՎ[ԻՆ]:ՈՇԶ: (1207):
ՀՊՎԱ

Ծանոթ. Արձանագրությունների վերծանման դժվարությունները չեն հաղթահարվել, և ընթերցումները թերի ու անորոշ են:

Ն Ե Ղ Ո Ւ Ց

Հնում կոչվել է *Նեղոց*՝ ավարառու, արյունարբու լեզգիներին դիմակայելու, նեղելու և հաղթելու իրադարձության առթիվ և ոչ տեղանքի նեղության պատճառով: Գտնվում է Ախթալայից մի փոքր հարավ-արևմուտք: